ԱՆԻ ԲԱԿԼԱՋՅԱՆ

ՈՒՐԻՇԻ ԽՆԴԻՐԸ ԺԱՆ ՊՈԼ ՍԱՐՏՐԻ «ԴՈՆՓԱԿ» ՊԻԵՍՈՒՄ

Ժան Պոլ Սարտրը, ուսումնասիրելով մարդու և բնության, անհատի և հասարակության, ազատության և անհրաժեշտի դիալեկտիկ, հակադրական կապը, ներկայացնում է դրանց մասին իր կատարած վերլուծությունները ոչ միայն իր փիլիսոփայական հայացքներում, այլև ստեղծագործական ողջ համակարգում:

Այս աշխատանքում կներկայացնենք Սարտրի «Դոնփակ» պիեսում արտացոլված ուրիշի խնդրի վերաբերյալ սարտրյան մոտեցումները զուգահեռ տանելով հեղինակի փիլիսոփայական դիտարկումների հետ, որոնք նա ներկայացրել է «Գոյություն և ոչինչ» փիլիսոփայական աշխատանքում:

Սարտրը, լինելով էքզիստենցիալիստական շարժման ներկայացուցիչներից մեկը, իր «Գոյություն և ոչինչ» գրքում մարդու գոյության խնդիրների, մարդկային ես-ի ուսումնասիրմանը զուգահեռ անդրադառնում է նաև ուրիշի խնդրին: Այս գրքում Սարտրը ընդգծում է երկու մեկը մյուսին չհանգող գոյության միջոցներ «գոյություն իր մեջ» և «գոյություն իր համար»: Առաջին գոյությունը «այն է, ինչ որ կա», այսինքն ուրիշը լինելու անկարողությունը: Այն ճանաչվում է որպես առարկայական աշխարհ, որպես բնություն, որպես արտաքին գիտակցական իրադրության զումար, նաև որպես մարդու անցյալ, արդեն եղած, որը հնարավոր չէ դարձնել չեղած: Երկրորդը գոյություն է, որը մենք ճանաչում ենք ըստ մարդկային գոյության յուրահատկության բացասման, զոջման և այլնի: Այդ միջոցը հայտնաբերում է անբավարարությունը, մարդու ոչ նույնականությունը իր ներսում: Նմանատիպ գոյությունը «այն է, ինչ այն չկա, և այն չէ, ինչ այն կա»: Դրանով նմատիպ գոյության հիմնական բովանդակությունը բացասումն է, որը հնարավոր է, եթե նրա ոչ նույնականության իմաստը ոչինչն է, դատարկությունը, բացակայությունը: Գոյություն ունենալով ոչնչից այն չի սահմանվում ոչ ուրիշ գոյությամբ, ոչ ինքն իրենով և այդ պատճառով համընդհանուր ձևով ազատ է, հայտնաբերվում է որպես ինքն իր մշտական, անընդհատ ընտրություն, որպես ինքն իր զերազանցում ու տրանսցենդենտություն (իմացությանը անմատչելի): «Իր համար գոյությունը» չի ընտրում աշխարհը, որտեղ որ նա կա, այսինքն ազատության իրականացման պայմանները: Սակայն այն պատասխանատու է այն մտքի համար, որը տալիս է այդ փաստերի զումարին կյանքի նշանակալից տեղ կոնկրետ իրավիճակում: Մարդը իր անցյալն է, բայց նա էքզիստենցիա է, քանի որ պրոեկցում է իրեն ապագայում, որը չկա որպես պոզիտիվ գոյություն, բայց

որը կազմավորում է իր համար գոյության հորիզոնը, որ հայտնաբերում է իրեն սահմանից այն կողմ։ Ապացան փնտրելու առարկա է, մարմնացում։ Այն խայծ է էքզիստենցիայի համար, որ նրա ետևից ձգվում է այն բոնելու անհույս փորձի մեջ ու հենց դրանով իրականացնելու իր հնարավորությունները, որոնք այն դրանց իրագործմանը զուգընթաց մի կողմ է նետում՝ որպես ինչ-որ օտար բան, որը չի համապատասխանում իրեն։ Սարտրը քննադատում է մարդու փորձը ձուլվել այն բանի հետ, ինչ նա դառել է, ձգտման հետ վերստեղծել իր անցյալը ներկայի, «իր համար գոյությունը» «իր մեջ գոյության»։ Նմանատիպ փորձի ըստ Սարտրի կարելի է հանդիպել կրոնում, գեղարվեստական ստեղծագործության մեջ և ուրիշների հետ հարաբերություններում։ Նա իր կատարած դիտարկումներում բացառում է ուրիշի աշխարհ մուտք գործելու հնարավորությունը։ Մարդը չի կարող մտնել ուրիշի ես-ի մեջ, հետևաբար չի կարող իր միջով տանել նրան։ Սակայն մեկի գոյությունը պայմանավորված է ուրիշի գոյությամբ, քանզի մարդն իրեն գիտակցում է որպես օբյեկտ կամ գոյ, երբ ուրիշն է նայում նրան։ Ուրիշի օգնությամբ մարդը ճանաչում է ինքն իրեն, ավելին, հաստատում է իր գոյությունը։

Ուրիշի խնդրի վերաբերյալ Սարտրի հայացքները իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել «Դոնփակ» պիեսում, որի գործողությունները տեղի են ունենում դժոխքում։ Ստեղծագործությունն սկսվում է այսպես. վախկոտությունից դասալիք դարձած Գարսենը հայտնվում է դժոխքում։ Բայց այստեղ չկան դժոխքի մասին դասական պատկերացումները եռացող կաթսաներ, ցցեր, կրակ, դահիճ և այլն։ Նա հայտնվում է երկրորդ կայսրության ոճով կահավորված մի սենյակում և տարակուսում է. եթե սա է դժոխքը, ապա այն բոլորովին էլ վատը չէ։ Սակայն սենյակը համալրվում է երկու մեդսունակ կանանցով ևս, և նրանց փոխհարաբերությունների արդյունքում սկսվում է իսկական դժոխքը։ Սարտրի «Դոնփակ» պիեսի երեք հերոսների համար դժոխքը առաջին հայացքից միանգամայն հաճելի, հարմարավետ ու անվնաս է թվում։ Սակայն որոշ ժամանակ անց միասին անցկացնելուց հետո, նրանք հասկանում ու գիտակցում են իրենց անելանելի բարդ դրությունը։ Սարտրյան հերոսներից յուրաքանչյուրը գործողությունների ծավալման ընթացքում քայլ առ քայլ գիտակցում է, որ իրենց մարդկային գոյությունը կախված է դիմացինի հայացքից, որում արտացոլվում է իրենց ներքին իսկական ես-ը։ Եվ եթե նույնիսկ նրանք փորձեն իրենք իրենցից թաքցնել իրենց ներաշխարհի գաղտնիքները, իրենց իսկ համար անցանկանալի սեփական զգացողություններն ու իրենց բուն էությունը, միևնույն է, ինքնախաբեությունը երկար չէր տևի և շատ շուտով կփլուզվեր, քանի որ ուրիշի ճշմարտախոս հայացքը թաքցնելը ուղղակի

անհնար է։ Եվ ահա հենց ուրիշի հայացքից բղավող, երբևէ չլռող ու ամենուր իրենց հետևող սեփական ես-ի մեջ պարփակված երբեմնի զգացողություններն ու ապրումներն էլ հենց ստեղծում են դժոխքը։ Գործողությունների ծավալման ընթացքում պարզվում է, որ նրանց հայտնվելն ու մնալը դժոխքում ինքնակամ է, քանի որ ուրիշի հայացքը, որքան էլ որ ցավ պատճառի և անհանար ու անտանելի դարձնի իրենց գոյությունը, միևնույն է, ուրիշը իրենց գոյության միակ միջոցն է, ուրիշի գոյությունը միակ անհրաժեշտ պայմանն է ես-ի գոյության։ Հեղինակը ցույց է տալիս, որ միայնակ, առանց ուրիշների հերոսների կյանքը դժոխքում միանգամայն անհոգ ու հանգիստ կանցներ, սակայն մարդուն, բացի ներքին հանգստությունից, անհրաժեշտ է նաև իր ներքին ես-ի գիտակցում, այդ ես-ի գնահատում և ճանաչում ուրիշի կողմից։ Սակայն հեղինակը ցույց է տալիս, որ հենց նման իրավիճակն ու մարդու ներքին ես-ի արտացոլումը ուրիշի աչքերում իսկական դժոխքի են վերածում ստեղծագործության հերոսների կյանքը։ Պետք է նաև նկատի ունենանք այն հանգամանքը, որ գրողի կողմից դժոխքի նկարագրությունը և այս հերոսների ընտրությունը փոխաբերական նշանակություն ունի և ներկայացնում է ընդհանրապես մարդկային կյանքի և մարդկային համընդհանուր փոխհարաբերությունների արտացոլումը։ Պատահական չէ, որ սարտրյան դժոխքում չկա հայելի, այսինքն ստեղծագործության հերոսներից յուրաքանչյուրն իրեն տեսնում է մյուսի աչքերում, և առաջին ցավը, որ նրանք ապրում են, սեփական ես-ի, դեմքի կորուստն է ուրիշի աչքերում։ Ուրիշի հայացքը խլում է ինձանից ինձ։ Այն պահանջում է ինձանից լինել մեկը, համապատասխանել նրան, ինչպես ըմբռնում է ինձ ուրիշը։

Այսպիսով, յուրաքանչյուրը մյուսի կարիքն ունի, և այդ շրջապտույտը հավերժ է։ Առանց ուրիշի մարդկային կյանքը դառնում է անիմաստ. միայնակ մարդը միշտ կարիք ունի մեկ ուրիշի գոյությանը իր կողքին, իր համար, չնայած որ ուրիշի գոյությունն էլ հենց դժոխքի է վերածում նրա կյանքը։ Բայց պետք է նկատի ունենալ, որ նման մոտեցումը փոխադարձ է ու փոխկապակցված, որքան ես ուրիշի կարիքն ունեմ, նունքան նա ունի իմ գոյության կարիքը իր համար։

Ըստ Սարտրի ուրիշների փոխհարաբերություններն ի հայտ են գալիս միայն կոնֆլիկտի առկայության դեպքում։ Չնայած որ մարդուն սեփական գոյության համար անհրաժեշտ է ուրիշի գոյությունը, սակայն ուրիշի գոյությունը խլում է ինձնից իմ ազատությունը, և մարդը փորձ է անում ազատվել իր համար այնքան անհրաժեշտ, բայց նաև իր ազատությունը սահմանափակող ուրիշից։ Եվ ուրիշը ևս զգում է իմ գոյության անհրաժեշտությունը և միևնույն ժամանակ իր ազատությունը սահմանափակող իմ

17

գոյությունից ազատվելու ցանկությունը: Սա նշանակում է, որ երբ ես փորձում եմ ազատվել ուրիշի ազդեցությունից, ուրիշն էլ փորձում է իմ ազդեցությունից դուրս գալ, երբ ես ուրիշին ենթարկում եմ ինձ, ես նույնպես ենթարկվում եմ նրան: *Ես-ուրիշը* փոխհարաբերության այդ շրջապտույտը դառնում է եկեղեցական: Մարդկանց փոխհարաբերություններն աղավաղված են, արատավոր, ապա սեփական արարքը ուրիշի աչքերով դիտելու, ուրիշի մեկնաբանությամբ դատելու անխուսափելի հանգամանքը դժոխքի է վերածում նրանց ապրելակերպը: Իմ ազատությամբ ես սահմանափակում եմ ուրիշի ազատությունը, սակայն ուրիշի ազատությունն իմ գոյության հիմքն է: Ես գոյություն ունեմ ուրիշի ազատության հաշվին, ուստի ես կախված եմ ուրիշից, և այս առումով իմ կյանքն ապահովագրված չէ: Այդ ազատությունից ինձ ամեն վայրկյան վտանգ է սպառնում, այն առկախում է իմ գոյությունը և ստիպում ինձ ապրել: Իմ գոյությունն ինքս ունենալու, տնօրինելու համար պետք է խլել ուրիշի ազատությունը: Ուրիշի հայացքից ես այլևս չեմ տիրապետում իրավիճակին: Սարտրը գրում է. «Ինձ տիրանում է ուրիշը, ուրիշի հայացքը ձևակերպում է իմ մարմինը իր մերկության մեջ, ծնում է այն, քանդակում, արտադրում է այն այնպես, ինչպես որ կա, տեսնում է այն այնպիսին, ինչպես ես երբեք չեմ տեսնի: Ուրիշը պահպանում է գաղտնիքը, այն բանի գաղտնիքը, թե ով եմ ես»[1]([2], c. 380): Սակայն լինելով ազատ գոյ մարդը չի կարող հանգիստ վերաբերել իր ազատության օտարմանը ուրիշի կողմից: Միևնույն ժամանակ ուրիշը հետաքրքրված է իմ ազատության պահպանման մեջ, քանի որ համակելով ինձ որպես որոշակիություն՝ նա կորցնում է ինձ որպես մի ուրիշ իրեն, իսկ նա ցանձում է հենց դա: Սարտրի փիլիսոփայության համաձայն, քանի որ ես ձգտում եմ վերադարձնել իմ ազատությունը, ապա հնարավոր են երկու տեսակի հարաբերություններ ուրիշի հետ: Մի կողմից ես կարող եմ փորձել ձուլել ուրիշի գոյությունը իմ գոյությանը այնպես, որ նա չտարբերակվի ինձնից. այդ ժամանակ նրա հայացքը կդառնա նաև իմ հայացքը: Մյուս կողմից ես կարող եմ լիովին ոչնչացնել ուրիշի սուբյեկտիվությունը, վերածել նրան օբյեկտի, որը չի կարող ունենալ հայացք, որը կօտարացներ իմ ազատությունը: Սարտրը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում ուրիշի օբյեկտիվացումը անհնար է. «Ուրիշը ոչ մի դեպքում մեզ տրված չէ որպես օբյեկտ»[2]([2], c. 291): Խնդիրը ավելի է բարդանում, երբ խոսքը գնում է սիրո մասին: Ըստ հեղինակի դիտարկումների սիրող մարդը ձգտում է նրան, որ իրեն սիրեն: Սակայն միևնույն ժամանակ նա ցանկանում է, որ իր սիրեն

---

[1] Այս և մյուս մեջբերումները կտրվեն ըստ գրականության ցանկի համարների տեքստում փակագծերի մեջ նշելով համապատասխան էջը:

ազատության միջոցով, ոչ թե ստիպողաբար։ Հենց աստեղ էլ առաջանում է առաջին հակադրությունը։ Քանի որ ես ուզում եմ, որ ուրիշը ինձ անընդհատ սիրի, հետևաբար ես նեղացնում եմ ուրիշի ազատության սահմանները։ Սա կոնֆլիկտի առաջին աղբյուրն է։ Բայց սիրո ցանկությունը հակադրական է նաև այլ տեսանկյունից։ Երբ ես ուզում եմ, որ ուրիշը ինձ սիրի, այդ ժամանակ ես ուզում եմ նաև, որ ուրիշը ցանկանա, որ ես նրան սիրեմ։ Երբ ես ուրիշից սեր եմ պահանջում, հենց դրանով ցանկանում եմ, որ նրա մոտ էլ իմ ցանկությունը ասիմիլացիայի ենթարկելու ցանկություն առաջանա։ Սա էլ կոնֆլիկտի հաջորդ աղբյուրն է։ Սարտրը եզրակացություն է անում, որ այստեղ բախվում են երկու հակադիր և փոխկապակցված ցանկություններ, որոնք անհաջողության են մատնված։ Սիրո մեջ կարող են հասնել մեկ մարմնի, բայց գիտակցությունը կմնա անձեռնմխելի իր ազատության մեջ, մինչդեռ սիրո իմաստը Սարտրի կարծիքով հենց ուրիշի գիտակցության ներձուլումն է որպես նրա ազատության գոյություն։ Քանի դեռ ուրիշը ունի ազատ գիտակցություն (ես ուզում եմ, որ նա ունենա այդպիսի գիտակցություն), նա մնում է օտար ինձ համար, քանի որ իր օբյեկտիվացնող հայացքով նա խլում է իմ ազատությունը։ Նշանակում է, որ սիրո մեջ ես չեմ կարող ուրիշի ազատությունը ենթարկել ինձ և դրանով լուծել իմ լիարժեք ազատության ձեռքբերման խնդիրը։

Ուրիշի օբյեկտիվացումը իմ գոյության պաշտպանությունն է, որն էլ հենց ազատում է ինձ ուրիշի համար գոյությունից՝ ուրիշին տալով գոյություն ինձ համար։ Սարտրը ցույց է տալիս, որ հայացքի ֆենոմենում ուրիշը նա է, ով չի կարող օբյեկտ լինել։ Սա է պատճառը, որ այն սենյակում, ուր ընկնում են «Դոնփակ» պիեսի հերոսները, հայելիներ չկան։ Հերոսները իրենց տեսնում են միայն ուրիշի հայացքի միջոցով։ Այսպիսով, ուրիշը ինձ համար գոյություն է, որի համար ես օբյեկտ եմ։ Հայացքի միջոցով ես ուրիշին զգում եմ որպես ազատ և գիտակցող սուբյեկտ։ Եվ այդ սուբյեկտի ներկայությունն անհրաժեշտ պայման է ամեն մի մտքի, որը ես կփորձեի ձևակերպել իմ մասին. «Ուրիշները իմ հարաբերությամբ ներկա են առանց որևէ միջնորդի որպես տրանսցենդենտություն, որը իմը չէ»[3]([2], c. 292)։ Ըստ Սարտրի այս ամենը ցույց է տալիս ոչ միայն իմ վերաբերմունքը ուրիշի հանդեպ, այլև ուրիշինը՝ իմ նկատմամբ։ Ուրիշի հայացքի միջոցով «ես դառնում եմ գերի այնքանով, որքանով իմ գոյությամբ կախում ունեմ այն ազատությունից, որն իմը չէ, բայց իմ գոյության պայմանն է։ Քանի որ ես գնահատականների օբյեկտ եմ, որոնք փորձում են ինձ որոշակիացնել, առանց այն բանի, որ ես կարող եմ այդ որոշումների վրա ազդել, ես գտնվում եմ գերության մեջ»[4]([2], c. 290)։ Հենց այս պատճառով էլ հերոսների փակումը դժոխքում դառնում է ինքնակամ։ Նրանք դուրս չեն գալիս սենյակից, քանի որ կապված եմ միմյ-

անց, չնայած որ այդ փոխկապակցվածությունը նրանց մեծ ցավ է պատճառում, զրկում է ազատությունից, բայց նաև պայմանավորում է նրանց գոյությունը:

Այսպիսով, ըստ Սարտրի փիլիսոփայական հայացքների, գոյությունը ուրիշի համար անընդհատ ապացույցն է իմ մարդկային իրականության, ուրիշի ազատությունը իմ գոյության հիմքն է: Բայց հենց նրա համար, որ ես գոյություն ունեմ ուրիշի ազատության միջոցով, ես չունեմ ոչ մի պաշտպանություն, ես վտանգի մեջ եմ այդ ազատության մեջ, այն ձևավորում է իմ գոյությունը և ինձ գոյ է դարձնում, այն տալիս և խլում է ինձանից արժեքներ և պատճառ է դառնում իմ գոյության անընդհատ պասսիվ հեռացմանը ինքն իր մեջ:

Մեր փոխադարձ պահանջը մեկը մյուսի պահանջում է նաև միասնականություն և մեկուսացածության պահպանում: Համատեղման իդեալը Աստված է, իսկ մարդը լիակատար չէ և «անօգուտ կիրք» է: Հայտնաբերելով *ես-ուրիշը* հարաբերության և ուրիշի կողմից տեսնվելու կառուցվածքային կապը Սարտրը մշակում է հայացքի ֆենոմենը: Քանի որ ուրիշը, ինչպես և ես, ազատություն է, ես աշխարհում հայտնվում եմ վտանգի մեջ: Ըստ Սարտրի *ես-ուրիշը* փոխհարաբերությունը երկու ազատությունների կոնֆլիկտ է: Դրամատիզմը և միաժամանակ ամբողջական գոյության հնարավորությունը գիտակցությունների միջև հարաբերություններում կապակցվում են Սարտրի կողմից դրանց փոխադարձ ընդունման պրոբլեմով (ես ընդունում եմ և ես ցանկանում եմ, որ ուրիշները տան ինձ գոյություն, որը ես ընդունում եմ): Ըստ Էության ստեղծագործության հերոսներից յուրաքանչյուրն էլ ուներ փրկվելու հնարավորություն, սակայն մարդկային նախանձը, անհամաձայնությունն ու եսասիրությունը նրանց դա թույլ չեն տալիս: Օրինակ Գարսենը խնդրում է հավատալ իր քաջ լինելու հնարավորությանը. դա նրան կփրկեր: Սա նշանակում է, որ նա ցանկանում է, որ ուրիշը ճանաչի ոչ թե իր իսկական գոյությունը, այլ այն գոյությունը, որն իրեն անհրաժեշտ է, որը նա ընդունում է: Մակայն Էստելը միայն ձնացնում է, որ հավատում է նրան, քանի դեռ դա իրեն հարկավոր է, իսկ Ինեսը կարողանում է ճանաչել նրա բուն էությունը և իրենց փոխհարաբերությունների իրական արժեքը. «Դահիճը մեզանից յուրաքանչյուրն է մնացած երկուսի համար»([1], էջ 379): Նրանք չեն կարող միմյանց համար դրախտ ստեղծել, սակայն կարող են ինքնակամ ընտրել իրենց դժոխքը:

Ինչպես տեսնում ենք, Սարտրի կարծիքով իմ և ուրիշի փոխհարաբերությունը պետք է լինի ոչ միայն գիտակցության հարաբերությունը գիտակցությանը, այլև գոյությանը գոյությանը: Իմ գոյությունը պետք է կապված լինի ուրիշի գոյությանը: Ի վերջո, ստեղծագործության հերոսները

հասկանում են, որ իրենցից յուրաքանչյուրը մյուսի կարիքն ունի իր գոյությունը հաստատելու համար, նրանք հասկանում են իրենց կախվածությունը ուրիշի հայացքից, որտեղ նրանք օբյեկտիվանում են և դրանով իսկ հնարավորություն են ստանում իրենց մասին դատելու: Դժոխքում հայտնված այս երեք մարդիկ ոչինչ չունեն շփումից բացի: Բայց այն վերածվում է իսկական փորձության: Ի վերջո, պարզվում է, որ այդ մարդկանց փակումը ինքնակամ է, նրանք ցանկացած ժամանակ կարող են դուրս գալ իրենց *բանտից*, բայց նախընտրում են մնալ այնտեղ: Այս ամենից հետո Գարսենը հետևություն է անում. «Ցցերի կարիք չկա, դժոխքը դա Մյուսներն են»[6]([1], էջ 407):

Այսպիսով, այս հոդվածում մենք փորձել ենք ցույց տալ ուրիշի խնդրի վերաբերյալ Ժան Պոլ Սարտրի կատարած դիտարկումները «Դոնփակ» պիեսում՝ զուգահեռ տանելով միևնույն խնդրի վերաբերյալ հեղինակային մոտեցումների հետ, որ արտացոլվել են «Գոյություն և ոչինչ» գրքում:

Գրականություն

1.Սարտր Ժան-Պոլ. Թատերգություն, Ե., 1986թ.:
2.Киссель М. А., Философская эволюция Ж.П. Сартра, М., 1976г.
3.Кузнецов В.Н., Ж.-П. Сартр и экзистенциализм, М.,1969г.
4.Сартр Ж.-П., Бытие и ничто, М., 2000г.
5.Филиппов Л.И., Философская антропология Ж.П. Сартра, М., 1977г.